ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փ Ե Յ Մ Ա Ն Մ Ա Թ Ի Ն

Բույսերը Իրանի ժողովուրդների հավատալիքներում

Է. 00. 04 “Ազգագրություն” մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ПЕЙМАН МАТИН

РАСТЕНИЯ В ВЕРОВАНИЯХ НАРОДОВ ИРАНА

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00. 04 “Этнография”

ԵՐԵՎԱՆ -2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոց. Առաքելովա Վ. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., Պետրոսյան Է. Խ.

պ. գ. թ. Ամրյան Թ. Ի.

Առաջատար կազմակերպություն՝Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հոկտեմբերի 26-ին ժամը 14.00 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտություն և ազգագրություն մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան -0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի ՝ ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. սեպտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института Археологии и этнографии НАН РА.

Научный руководитель: к. и. н., доц. В. А.Аракелова

Официальные оппоненты: д. и. н. Петросян Э.Х.

к. и. н. Амрян Т. И.

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарапатской битвы, национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состится 26 октября 2017г. в 14.00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15)

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 26 сентября 2017г.

Ученый секретарь специализированного совета

Кандидат исторических наук У. А. Мелконян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Իրանական մշակույթն ունի հազարամյակների պատմություն: Այն անընդհատ ձևափոխվել, համալրվել ու հարստացվել է արտաքին ու ներքին ազդեցությունների արդյունքում: Ազգաբանական մոտեցման դեպքում իրանական մշակույթը պետք է դիտարկել առնվազն երկու հարթությունում, հատկապես երբ խնդիրը վերաբերում է վերջինիս կարևորագույն բաղադրիչ հանդիսացող առասպելաբանությանն ու առասպելամտածողությանը: Մի կողմից, այն մաս է կազմում համահնդեվրոպական մշակութային աշխարհին, որպես վերջինիս ուրույն բաղադրիչ, զարգացման ներքին տրամաբանությամբ ու առանձնահատկություններով: Մյուս կողմից, տարածաշրջանի առանձին ժողովուրդների (ոչ միայն իրանալեզու) ու մշակույթների հետ տարբեր պատմական շրջափուլերում սերտ ու ինտենսիվ փոխանակությունների մեջ գտնված, ազդեցություններ ու փոխազդեցութուններ ունեցած համակարգ է: Այս ընդհանուր համատեքստում են նաև իրանական հոգևոր մշակույթը, առասպելաբանությունը, տոներն ու ծեսերը, պաշտամունքն ու հավատալիքները:

Եվ իրանական և այլ ժողովուրդների ազգագրական ուսումնասիրություններում ցույց է տրված այն կարևոր, առաջնային դերը, որ խաղացել են բնությունը, բուսական աշխարհն ու առանձին բուսատեսակներ մշակույթում ընդհանրապես, տոնածիսական արարողություններում ու պաշտամունքում մասնավորապես: Իրանական մշակութային աշխարհն այս տեսանկյունից բացառություն չէ: Ցայսօր սակայն, այս խնդիրը համակողմանիորեն ուսումնասիրված չէ, հետևաբար սույն ատենախոսությունում առաջին անգամ համակողմանի ազգագրական քննության են ենթարկվում իրանական մշակույթում բույսերի պաշտամունքի, վերջիններիս դրսևորումների վերաբերյալ խնդիրները:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է աղբյուրների, մեր կողմից գրառված դաշտային ազգագրական նյութերի ու հրատարակված պարսկալեզու ու օտարալեզու գրականության քննության միջոցով ցույց տալ, թե ինչ դեր ու գործառույթ են ունեցել բույսերն ընդհանրապես ու բույսերի առանձին տեսակները իրանական առասպելներում ու առասպելամտածողությունում, իրանական ժողովուրդների հավատալիքներում, ինչպես են դրանք կիրառվել կոնկրետ արարողություններում ու ծիսական գործողություններում, ինչ

սահմանափակումներ են ձևավորել հանրույթի կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող ոլորտներում, ինչպես օրինակ ուտեստ, հատկապես տոնածիսական ուտեստը, հիշատակի ծեսեր և այսպես շարունակ: Ատենախոսությունում, հաշվի առնելով նաև Իրանի բազմէթնիկ լինելը, քննության չեն առնվում կրոնական փոքրամասնություններին՝ հայեր, ասորիներ, հրեաներ, վերաբերող նյութերը: Որպես համեմատական նյութ գործածվում են այն նյութերը, որ մենք գրառել ենք ազգագրական գիտարշավների ընթացքում Գյուլիստան (Ղորղան) պրովինցիայում բնակվող թուրքմեններից: Այսինքն, գիտական շրջանառության մեջ դրվող նյութը վերաբերում է հիմնականում Իրանի տարածքի իրանալեզու էթնիկ հանրություններին:

Աշխատանքում փորձել ենք լուծել երեք հիմնական խնդիր:

Առաջին խնդիրը վերաբերում է Իրանի ժողովուրդների մշակույթում բույսերի պաշտամունքի հիմքերի ու դրսևորումների ուսումնասիրությանը: Կարևոր ուշադրություն է դարձվել առասպելներում, ավանդազրույցներում, էպոսում, հեքիաթներում ու ժողովրդական բանահյուսության տարբեր նյութերում բույսերի պաշտամունքի դրսևորումներին, ակունքներին, փորձ է արվել այս ամենը դիտարկել պատճառահետևանքային կապի մեջ: Խնդրի ամբողջական լուծումն ապահովելու նպատակով դիտարկվել է երեք հիմնական հարթություն:

Իրանական մշակույթում բույսերի պաշտամունքի դրսևորումները ամբողջական ներկայացնելու նպատակով, առասպելաբանության, հեքիաթների, ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունից զատ, կարևորել ենք տոնածիսական կյանքն ու առօրյա կենցաղը: Ուտեստը նույնպես հանդես է գալիս որպես բույսերի պաշտամունքի ազդեցությունը կրող համակարգ: Իրանական մշակույթում բույսերի պաշտամունքի հստակ ու առավել ամբողջական դրսևորումները հանդիպում են ամուսնահարսանեկան և սգո ու հիշատակման արարողություններում:

Երրորդ խնդիրը վերաբերում է բույսերի չարխափան ու պաշտպանիչ նշանակության տարբեր առումների դիտարկմանը, քանի որ ամեն ինչ հաճախ ավելի ավելի առօրեական է, քան կարելի է ենթադրել:

Այսպիսով, որպես մեկնակետ արձանագրվում է, որ բույսերը իրանական մշակույթի կարևորագույն մասն են և իրանցիների հոգևոր ու նյութական կյանքում կարևոր ազդեցություն ունեն:

Ատենախոսության գիտական նորույթը: Առաջին անգամ ազգագրորեն, ազգագրական գիտությունում կիրառվող մեթոդների կիրառմամբ, ներկայացվում է բույսերի պաշտամունքը իրանական ժողովուրդների մշակույթում՝ որպես փոխկապակցված ու

փոխպայմանավորված բարդ համակարգ: Ցույց են տրվում բույսերի պաշտամունքի, տարբեր ծիսական արարողություններում վերջիններիս դերի ու նշանակության, զարգացումների ու փոխակերպումների շարժընթացը, դրանք պայմանավորող ներքին ու արտաքին գործոնները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությունը ժամանակագրորեն ընդգրկում է 1387/2009 թվականից մինչև 1392/2013 թվականը: Մեթոդաբանորեն այն իրենից ներկայացնում է պատմագիտությունում և ազգաբանությունում ընդունված մեթոդների զուգակցում, սակայն հիմնականը ազգագրական մեթոդաբանությունն է, մասնավորապես՝ դաշտային ազգագրական հետազոտությունների, անհատական ու խորացված հարցազրույցների, դիտարկումների մեթոդները: Դաշտային աշխատանքներ են կատարվել շուրջ 75 գյուղում ու քաղաքում: Հարցազրույցներն անցկացվել են հիմնականում ավագ սերնդի ներկայացուցիչների հետ (ընդհանուր առմամբ շուրջ 60 հարցազրույց): Օգտագործել ենք նաև դիտարկումների մեթոդը, ինչի արդյունքում կարողացել ենք գրառել իրենց արդիականությունը պահպանող այնպիսի ծեսեր, որոնք կապված են առանձին բույսերի պաշտամունքի հետ: Այս աշխատանքի համար, բացի դիտարկումների ու անհատական խորացված հարցազրույցների մեթոդից, օգտվել ենք Իրանում ազգագրական հետազոտությունների ընթացքում լայնորեն կիրառվող Rapid Rural Appraisal (արագ գյուղական գնահատում) և Participatory Rural Appraisal (գյուղական մասնակիցների գնահատում), իսկ քաղաքներում Participatory Assessment, Monitoring and Evaluation (մասնակիցների գնահատում և մոնիթորինգ) մեթոդներից: Օգտագործվել են նաև իրանական ազգագրության գրավոր տվյալները՝ մենագրությունների, հոդվածների ու գրքերի տեսքով:

Օգտագործված գրականության տեսություն Ատենախոսության շարադրանքի ընթացքում օգտվել ենք ինչպես անգլերենով, այնպես էլ պարսկերենով հրատարակված՝ խնդրո առարկային վերաբերող հիմնական գրականությանից, որում մեծ թիվ են կազմում ինչպես տեսական ուսումնասիրությունները, այնպես էլ կոնկրետ խնդիրների վերաբերող դիտարկումներն ու վերլուծությունները:

Խնդրո առարկային վերաբերող թերևս ամենավաղ ակադեմիական ուսումնասիրություններից մեկը, որ վերաբերում է բույսերի պաշտամունքին Ա. Դե Գուբերնատիսի “Բույսերի առասպելաբանությունը և կանաչ աշխարհի լեգենդները” վերնագրով ուսումնասիրությունն է, որը հրատարակվել է Փարիզում, 1882թ. (Gubernatis 1882): Խնդրին վերաբերող վաղ շրջանի ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել նաև Շ. Ժորեի (Charles Joret) «Les Plantes dans l’antiquité et au mojen age» («Բույսերը հնում և մեր օրերում») ուսումնասիրությունը, լույս տեսած Փարիզում, 1904 թ. (Joret 1904).

Այս աշխատությունում քննարկվում են դասական Արևելքի, Եգիպտոսի, Փյունիկիայի ու այլ մշակույթներում բույսերի պաշտամունքի ու պաշտամունքային բույսերի վերաբերյալ տարբեր հարցեր:

Բանահյուսության, բանագիտության և էթնոբուսաբանության սահմանագծին կարևոր պետք է համարել Ջ. Ք. Բերդվուդի "Բույսերի բանահյուսությունը" վերնագրով տեղեկատվական բնույթի աշխատանքը:

Իրանական հավատալիքներում ու առասպելներում բույսերի պաշտամունքի վերաբերյալ նյութեր պարունակող ուսումնասիրությունների շարքից կարելի է առանձացնել Ջեհաբգիր Քոյաջիի (Coyajee, Jehabgir) «Cults and Legends of Ancient Iran and China» («Հին Իրանի և Չինաստանի պաշտամունքն ու լեգենդները») վերնագրով մենագրությունը, հրատարակված Բոմբեյում, 1938թ. (Coyajee 1938): Վաղ շրջանի կարևոր ուսումնասիրություններից է նաև Դ. Հուփերի (David Hooper) «Useful Plants and Drugs of Iran and Iraq» («Իրանի և Իրաքի օգտակար բույսերը») վերնագրով աշխատությունը, որը հրատարակվել է Չիկագոյում, 1937թ. (Hooper 1937): Այս գրքին մեծ կարևորություն է հաղորդում հատկապես բույսերի՝ իրանական ու իրաքյան անվանումների լատինական համարժեքների ցանկը, ինչը մեծապես դյուրացրել է հետագա հետազոտողների աշխատանքը՝ տարբեր բույսերի նույնականացման վերաբերյալ հարցեր քննարկելիս:

Անվերապահորեն դասական պետք է համարել Բ. Ա. Դոնալդսոնի (Donaldson, Bess Allen) «The Wild Rue Of Persia: Magic, Myth and Folklore in Iran» վերնագրով աշխատությունը, հրատարակված Լոնդոնում 1938թ.: Այս աշխատանքը մինչ օրս պահպանել է իր կարևորությունը որպես խնդրո առարկային վերաբերող կարևորագույն վերլուծական աղբյուր (Donaldson 1938):

Բույսերի պաշտամունքին վերաբերող տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև բազմաթիվ իրանցի հետազոտողներ, սակայն նրանց աշխատությունները լայն տարածում չեն ստացել հիմնականում պարսկերենով գրված լինելու պատճառով: Առավել հայտնի ուսումնասիրությունների շարքում է Սադեք Հեդայաթի "Նեյրանգեստան" աշխատությունը, որը կարևորագույն բազմաշերտ ուսումնասիրություն է, չափազանց հարուստ ազգագրական նյութերով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Զարգարիի "Դեղաբույսեր" վերնագրով աշխատությունը, որում հեղինակը, բացի դեղաբույսերի զուտ ֆիզիկական/ֆիզիոլոգիական ազդեցությունները քննարկելուց, դիտարկում է նաև վերջիններիս ծիսական նշանակության ու առանձին արարողություններում ունեցած դերի վերաբերյալ հարցերը (Zargarī 1989): Ք. Բելի երկու ուսումնասիրությունները՝ «Ծիսական տեսություն և ծիսական պրակտիկա» և «Ծես՝ չափումներ և հեռանկարներ» (Bell 1992; 1997), ընդհանուր առմամբ, բնութագրվում են որպես կարևորագույն

ավանդ կրոնագիտությունում, որոնք փոխեցին ծեսի բնույթի, գործառույթի, ինչպես նաև բնույթի ընկալման սահմանները: Վերջին շրջանի ուսումնասիրություններից կարելի է առանձացնել Ֆ. Սիմունսի 1998թ. հրատարակված «Plants of Life, Plants of Death» մենագրությունը: Նրանում համակողմանի քննության է ենթարկվում բույսերի սրբազան, ծիսական «բեռնվածության» հարցը: Հիմնարար աշխատություն է Չ. Սքինների (Charles Skinner) «Myths and Legends of Flowers, Trees, Fruits, and Plants» ծավալուն մենագրությունը, լույս տեսած 2002 թ. (Skinner 2002): Կարևոր պետք է համարել նաև Մ. դե Քլինի և Մ. Ք. Լեժյունի «Compendium of Symbolic and Ritual Plants in Europe» ("Եվրոպայի սիմվոլիկ և ծիսական բույսերի կոմպենդիում") վերնագրով աշխատությունը, հրատարակված Գնետի համալսարանի կողմից, 2003թ. (Cleane/Lejeune 2003):

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ Իրանի ժողովուրդների ազգագրության, մասնավորապես, բույսերի պաշտամունքի ու դրանց տարբեր առումների հետ կապված ուսումնասիրություններին, հատկապես որ խնդիրը ցայսօր մնում է ամբողջապես չուսումնասիրված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում են թեմայի ուսումնասիրության կարևորությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, տրվում է աղբյուրների ու գրականության վերլուծությունը, կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Բույսերի, վերջիններիս առանձին տեսակների պաշտամունքի տարբեր դրսևորումներ հանդիպում ենք իրանական առասպելներում, ավանդազրույցներում, հեքիաթներում ու ժողովրդական բանահյուսության բազմաթիվ այլ նմուշներում: Ազգագրական նյութերի, աղբյուրներում ու հետազոտություններում հանդիպող տվյալների համադրությունն ու համեմատությունը ցույց է տալիս, որ Իրանում, հարյուրամյակներ շարունակ, պաշտամունքի առարկա են հանդիսացել բուսական աշխարհի բազմաթիվ "ներկայացուցիչներ". ծառերը, թփերը, ծաղիկներն ու հատիկները:

1.1 Ծառերի պաշտամունք. արմատները, տեղական առանձնահատկություններն ու համաիրանականը

Տարբեր ծառերի պաշտամունքն ու վերջիններիս հետ կապված և վերջիններիս շուրջ կատարվող գործողությունները հնուց ի վեր չափազանց կարևոր դեր են խաղացել իրանական մշակույթում, ընդ որում դրանցում փայլուն զուգակցվում են մի կողմից բուն իրանականը, իսկ մյուս կողմից՝ լայն առումով առաջավորասիական ու հնդեվրոպականը:

Առաջավորասիական մշակութային արեալում, մասնավորապես դեռևս Հին Բաբելոնում, շատ ակտիվ ու կենսունակ էր կյանքի, կենաց ծառի գաղափարը: Հնագիտական նյութը, առասպելներն ու սեպագիր արձանագրությունները վկայում են այն մասին, որ այդպիսի ծառ էր համարվում **Էյան** (Ea), որի պտուղները անմահություն էին պարգևում: Ամենայն հավանականությամբ, հենց այստեղից է սկիզբ առնում կենաց ծառի գաղափարը Թորայում (Lechler 1937: 369):

Զրադաշտականության մեջ կենած ծառ է համարվում **հաոման** (Haoma), որի միրգը դրախտում Աստծու մերձավոր հրեշտակների ուտելիքն էր: Նույն անունով Ավեստայում հայտնի է նաև այս բույսից պատրաստվող ըմպելիքը:

Թզենին ևս համարվում է սուրբ ծառ, որը օժտված է բազմաթիվ դրական, բարեբեր հատկանիշներով: Այսպես, որոշ մշակույթներում այն ընկալվում է որպես ամուսնության, պտղաբերության, կանացի սկզբի խորհրդանիշ:

Մերձավոր Արևելքում և հնդեվրոպական միջավայրում բավականին լայն տարածում է ունեցել **նոճու պաշտամունքը:** Նոճու կոնաձև տեսքը, որը նման է կրակի լեզվակներին, այն դարձնում է կրակի խորհրդանիշը: Նոճու փայտի անուշաբույր հոտն օգտագործվում է սուրբ կրակը բորբոքելու և դրան հաճելի բույր հաղորդելու համար: Զրադաշտական ավանդության համաձայն, հենց Զրադաշտն էր, որ առաջին անգամ նոճին դրախտից բերեց և ձեռնամուխ եղավ երկրի վրա այն տնկելուն: **Սոճին** ամենաբարձր բույսերից է, որ հին քաղաքակրթություններում՝ Եգիպտոսից ու Ասորեստանից մինչև Իրան ու Հունաստան, առատության, հավերժության ու բերքատվության խորհրդանիշ է: Թախթ-է Ջամշիդի տաշած քարերը իրանական մշակույթում սոճու դերի և կարևորության վառ ապացույցն են:

Արմավը և դրա պտուղները հին Միջագետքում առատության ու պտղաբերության խորհրդանիշ էին: Այս տարածաշրջանում ամուսնությունը աստվածների մոր և Թամուզի՝ հացահատիկային բույսերի աստծո միջև կապ է ստեղծում սուրբ ծառի և ցորենի հատիկների մեջ (Hāl 1380/2001: 288, 307-

308): Աքեմենյան որոշ կնիքների վրա այդ ժամանակի մյուս խորհրդանիշների՝ Ահուրամազդայի, առյուծի, կառքի, որսորդության տեսարանների կողքին տեսնում ենք նաև արմավի պատկերներ (Pope 1964: 123): Հաջորդ ծառը, որի պաշտամունքը լայն տարածում է ունեցել իրանական տարբեր ժողովուրդների մոտ, **մայրին է:**

Նոնենին և պտուղը՝ նուռը, նույնպես, շնորհիվ ծառի մշտադալարության, համարվում են սուրբ, խորհրդանշելով պտղաբերությունը (Drower 1956: 7; Farrevaši 1355/1976: 65): Այս ծառի պաշտամունքը ևս տարածված է ոչ միայն Իրանում, այլ բազմաթիվ այլ ժողովուրդների մշակույթում: **Սերկևիլի ծառը** (Cydonia, պարս. beh, behi) ևս իրանցիները համարում են լիության խորհրդանիշ և բարեբերության նշան: Այս պատճառով էլ մեծ տոների ժամանակ՝ ինչպիսիք են Մեհրեգանը և Սադեն, օգտագործում են սերկևիլ, որպես խորհրդավոր և դժբախտություններից պաշտպանող միրգ: Երբ մոգպետները գնում էին թագավորների մոտ, իրենց հետ տանում էին շաքար, կիտրոն, խնձոր, սերկևիլ, նուռ, սպիտակ խաղող, որոշ այլ պտուղներ:

Իրանում որոշ մզկիթների մեջտեղում աճող **թթենիների՝** սուրբ համարվելը պատճառ է դարձել, որ այդ շրջաններում թթենիները սրբացվեն: Երկարակյաց թթենիները, որոնք աճում են էմամզադեների կամ մզկիթների հարևանությամբ, համարվում են հիվանդների, ուխտագնացների խնդրանքները, նվիրական երազանքները իրականացնողներ, այդ պատճառով էլ երբեմն դրանցից կախում են աչքի ուլունքներ ու թալիսմաններ: **Կաղնին** նույնպես, շնորհիվ իր մշտադալարության, հզորության, ամրության, ուժի և այլ հատկանիշների, համարվում է սուրբ: Հնդեվրոպական առասպելաբանությունում սուրբ են համարվում հատկապես այն ծառերը, որոնք աճում են սուրբ վայրերում, կամ դրանց հարևանությամբ. ըստ ժողովրդական պատկերացումների, այս ծառերը հսկվում են Աստծո կողմից: Մյուս ծառերից, որոնք սուրբ են համարվում, կարելի է անդրադառնալ **նշի ծառին՝ նշենուն** (պարս. bādām): Էլամում, օրինակ, գետնընկույզի ծառը (պարս. bādām-e kuhi) համարվում է սուրբ: Այստեղ հավատում են, որ սուրբ Խիզրի գավազանը պատրաստված է այս ծառի փայտից: Վստահ են, որ նշի ծառից պատրաստված ձեռնափայտը հաջողություն է բերում և այդ փայտի ծուխը անուշաբույր է և նույնիսկ սուրբ Ֆաթիմայի ավելը պատրաստված է եղել այս փայտից (Asadiānxorramābādi 1358/1979: 234): Հաջորդ ծառատեսակը կամ բուսատեսակը, որի պաշտամունքը բավականին լայն տարածում ունի իրանական մշակույթում, **կարմրանն** է (մյուս անվանումները մոշավայրի, մոշա, լատ. Tamarix, պարս. gaz): Այն ավանդաբար համարվել և ներկայում էլ համարվում է կախարդական, բուժիչ հատկություններով օժտված և թալիսմանի դեր կատարող ծառ, ինչի համար և դեռևս վաղ շրջանից պաշտամունքի

առարկա է իրանցիների, հատկապես սիստանցիների շրջանում: Կարմրանի մասին ամենակարևոր հիշատակումը հանդիպում է Շահնամեում: Հետազոտողներից Քույաջին, Ռուստամի և Էսֆանդիարի մենամարտի դրվագն ուսումնասիրելիս, ուշադրություն է դարձրել այնպիսի առանձին երևույթների, ինչպես Ռուստամի կողմից կարմրանի միրգն ուտելը մահից խուսափելու նպատակով, Սիմուրղի և կարմրանի ծառի միջև առկա կապը, Սիմուրղի կողմից Ռուստամին կարմրանի փայտից երկճյուղված նիզակ պատրաստել սովորեցնելը, ինչպես նաև Շահնամեում մարդկանց կողմից կարմրանի պաշտամունքը: **Չինարին** Իրանի տարածքում բնիկ ծառ է: Երկրագործ ժողովուրդներն այն համարում են ծառերի արքան: Չինարը, որպես գեղեցիկ, ուժեղ ու մշտադալար ծառ, դեռևս հնուց գովերգվում է ողջ Իրանում: Իրանում ծառերը, հատկապես չինարի ծառերը, էմամզադեների և սրբավայրերի կառուցման կարևոր պայմաններից են համարվում: Քանի որ էմամզադեների ծառերը երբեմն շատ հին են, անգամ հազարամյա, կարելի է ենթադրել, որ ոչ թե ծառն է սրբացվել, այլ էմամզադեն է կառուցվել հենց այդ ծառի մոտ:

1.2. Հատիկի և հատիկավոր բույսերի պաշտամունքի դրսևորումները

Հացահատիկը և հատիկը ամենաընդհանուրն ու խորն են այն բոլոր բուսական խորհրդանշաններից, որ ընդգծում են կյանքի զարգացման անընդհատության ու պտղաբերության գաղափարը: Բնական է, որ իրանական մշակութային աշխարհում, որը առաջավորասիական քաղաքակրթական արեալի կարևորագույն օջախներից է Միջագետքի, Հայկական լեռնաշխարհի ու հարակից տարածքների շարքում, հատիկի ու հատիկավոր բույսերի պաշտամունքը ևս պետք է ունենա խորը հիմքեր:

Ըստ հնագիտական տվյալների, ցորենի, բրնձի ու այլ հատիկավոր բույսերի մշակությունը Իրանում ունի հազարամյակների պատմություն: Ազգագրական ու բանահյուսական նյութերը, առասպելներից քաղված տեղեկություններն իրենց հերթին թույլ են տալիս խոսել այդ բույսերի պաշտամունքի նույնքան երկար պատմության մասին:

Իրանցիների շրջանում տարածված է մի հավատալիք, ըստ որի Իզադ Հադիշը, որը ընտանիքի և տան խորհրդանիշն է, աստծո հրամանով հացի սուրբ լինելը սովորեցրեց Մաշիային և Մաշիանային: Այս հավատալիքը այսօր էլ դրսևորվում է հացի ու բրնձի հանդեպ ունեցած ակնածանքով. իրանցիները խուսափում են փչացնել կամ ոչնչացնել աստծո տված այս «բարաքաթը» (Mazdāpur 1387/2008: 55): Սիրջանում բրնձին ու ցորենին, սուրբ լինելու պատճառով, անվանում են dānehā-ye qul huwa (բառացի՝ «Աստծո հատիկներ») (Movayedmoḫsenī 1381/2002: 502): Չի կարելի չխոսել նաև իրանական հեքիաթներում ու պատումներում գարու կարևոր դերի մասին: Գարին, որպես սուրբ հացահատիկ, հիշատակվում է Նովրուզնամեում: Ոսպը (lat. Lens, պարս.

‘adas) նույնպես առասպելներում հիշատակվող բույսերից է, որ Բունդահիշնում հիշատակվում է mažu և banu անուններով. «կրոնում ասվում է, որ երբ արարված միակ կովը սատկեց, այն տեղում, ուր նրա սերմն ընկավ, 55 տեսակի հատիկներ և 12 տեսակի բուժիչ բույսեր աճեցին, սերմից՝ քունջութ և լյուպին, եղջյուրից՝ ոսպ, քթից՝ ոսպ, երեխայի արյունից՝ խաղողի որթ, որից գինի են պատրաստում, թոքից՝ սպանդ, լյարդի միջից՝ Հեղինեի խոտ (կղմուխ) և ծոթոր ու այսպես շարունակ ինչպես Ավեստան է ասում» (1369/1990: 78): Ապա կենդանիների ու բույսերի արարման առասպելում ոսպը (mažu անունով) ստեղծվում է կովի եղջյուրից, իսկ banu տեսակը (որի կարմիր գույնն անվանում են ‘adas, իսկ սև տեսակը māš) նրա քթից: Ըստ այս տեքստի, քունջութը ևս համարվում է առասպելական բույս:

1.3 Այլ բույսերի պաշտամունքը

Բացի տարբեր ծառատեսակներից ու հատիկավոր բույսերից, Իրանի տարբեր ժողովուրդների շրջանում հարյուրամյակներ շարունակ պաշտվել են բազմաթիվ այլ բույսեր ևս: Դրանցից որոշները, ինչպես օրինակ հաոման, մանդրագորան, հանդիպում են բազմաթիվ անգամներ՝ ունենալով համակարգաստեղծ գործառույթներ ու հանդես գալով որպես բազմաթիվ ծիսական արարողությունների հիմնական տարր: Առասպելների ամենաճանաչված ու հայտնի բույսը **հաոման է:** Չնայած բացառիկ կարևորությանը, հետազոտողները դեռևս շարունակում են քննարկել հարցը, թե ինչ է իրենից իրականում ներկայացնում հաոման: **Ռևանդենին** և դրա նման մյուս բույսերը, բացի առասպելներում հիշատակվելուց, համարվում են նաև առաջին արիացիների սուրբ բույսերը, որոնք, հավանաբար, իրանցիների կողմից հետագայում վերածվել են հենց հաոմայի: Ռևանդենու ամենակարևոր դրսևորումը գտնում ենք Մաշիի և Մաշիանայի առաջին մարդկանց ստեղծման մասին առասպելներում, որոնք շատ հին արմատներ ունեն և արձանագրված են նաև պահլավական տեքստերում: Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ Մաշիայի և Մաշիանայի ռևանդենուն նման լինելը բացատրվում է այն բանով, որ ռևանդենին նույն մանդրագորան է, որի արմատը նման է փաթաթված տղամարդու և կնոջ: Հեքիաթներում ու հավատալիքներում ասվում է, որ այս բույսը անմեղ մարդու արյունից է, որին սպանել են:

Ամփոփելով իրանական մշակութային միջավայրում բույսերի տարբեր տեսակների պաշտամունքի հետ կապված հարցերի դիտարկումը, կարելի է արձանագրել դրանց ունեցած չափազանց մեծ կարևորության իրողությունը: Բերված ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ բույսերը “ներկա” են իրանական առասպելաբանության տարբեր սյուժեներում ու ունեն այն հիմնական գործառույթները, որ ունեն բույսերը առասպելաբանությունում

ընդհանրապես: Առասպելական սլուժեների ու դրանցում բույսերի դերի մասին հարցերի քննարկումը ցույց է տալիս նաև, որ բույսերի պաշտամունքն ու դրա տարբեր դրվագները ունեն տարբեր հիմքեր:

ԳԼՈՒԽ 2
ԲՈՒՅՍԵՐԸ ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Իրանական աշխարհընկալման առանձնահատկություններով պայմանավորված՝ բույսերի ծիսական գործառույթների կարևորությունն ընդունելով, այս գլխում հիմնվելով նաև ազգագրական նյութերի ու սկզբնաղբյուրների ուսումնասիրության վրա, ցույց է տրվում, թե ծեսերում ինչպես են “ներկայացվում” բույսերը, ինչպես են դրանք պայմանավորում բուն ծեսն ու ինչ փոխադարձ հարաբերությունների մեջ են ծեսի ու ծիսական գործողությունների այլ բաղկացուցիչների հետ:

Ըստ այդմ, նյութի համադրումն ու համակարգումը հնարավորություն է տալիս դիտարկել որոշ ընդհանրություններ, որոնք եթե նույնիսկ համաիրանական չեն, ապա գոնե ունեն տարածաշրջանային ընդգրկում ու կարևորություն:

Առաջին դիտարկումը վերաբերում է սրբավայրերում ու ուխտավայրերում բույսերի “առկայությանը”, ներկայությանը: Այս երևույթն ունի տարբեր բացատրություններ: Առաջինը և ամենակարևորը թերևս այն է, որ կոնկրետ բույսերը՝ ծառերը, թփերը, ծաղիկները, կապվում են կոնկրետ աստվածությունների, առասպելական հերոսների, վերջիններիս վերաբերող ծիսական արարողությունների ու գործողությունների հետ: Հետևաբար՝ բույսերի առկայությունը սրբազան վայրերում պետք է դիտարկել այս համատեքստում: Երկրորդ իրողությունը կապված է արդեն Իրանի տարածքում բնակվող էթնիկ հանրությունների տնտեսական զբաղմունքների հետ: Հնագիտական նյութերը վկայում են, որ լինելով քաղաքակրթական կարևոր օջախ, Իրանական բարձրավանդակը եղել է երկրագործության զարգացած կենտրոն: Իրանցիների ուտեստի համակարգում բույսերի ու բուսական ծագման կերակրատեսակների առկայությունը նույնպես ասվածի վկայություններից է: Հետևաբար, երկրագործական աշխատանքի բոլոր փուլերում առկա են ոչ միայն բույսերը, այլ նաև դրանց վերաբերող ու դրանց հետ կապված բավականին բարդ ծիսական արարողություններ: Իրանական մշակույթում այս տեսանկյունից հստակ դիտարկելի է հողագործության, առաջին հերթին՝ վարուցանքի, բերքահավաքի, տարվա տարբեր եղանակների և դրանց հետ կապված տոների ու ծեսերի մեջ բույսերի պաշտամունքի կամ

գործածության կապը ժամանակի և ժամանակի վերաբերյալ պատկերացումների հետ:

Եվ երրորդ ու թերևս ամենակարևոր ոլորտներից մեկը, որտեղ “ներկա” են բույսերը, կենսափուլերն են: Ծննդյան, ամուսնության, մահվան ու հիշատակի արարողություններում, որպես կանոն, բույսերը ու դրանց շուրջ կատարվող գործողությունները կարևոր դեր ունեն:

2.1. Բույսերի ծիսական նշանակության դրսևորումները երկրագործական տարեշրջանում

Իրանում, ըստ ազգագրական նյութերի ու աղբյուրների վերլուծության, բնականաբար, պետք է առավել հաճախ հանդիպեն այն բույսերը, որոնք կազմում են երկրագործության հիմքը. հատիկավորներ (ցորեն, բրինձ), ինչպես նաև առանձին շրջաններում տարածված բույսեր: Թեյագործության բարձր զարգացման հետ, բավականին տարածված են նաև թեյագործության հետ աղերսներ ունեցող ծեսերը: Լայն տարածում ունեցող այդպիսի ծեսերից մեկը՝ «Sāzenīk» և «Neṣār kardan» (զոհաբերել) ծեսն է, որի գործողությունները տեղի են ունենում Գիլանում թեյի բերքահավաքի ժամանակ:

Որոշ ուշագրավ ծիսական գործողություններ կատարվել են կարևոր նշանակություն ունեցող բրնձի մշակության շուրջ: Կեղևից չմաքրված բրինձը մշտապես եղել է ‘arūsyābarba’varī (հարսին օգնություն ցուցաբերել) ծեսի կարևոր բաղադրիչներից մեկը, որի ընթացքում փեսայի մայրը նորահարսին տանում է բրնձի դաշտ՝ բրինձ ցանելու առաջին օրն իրեն օգնելու համար: Նորահարսն իր մի քանի ծանոթների ու ընկերների ուղեկցությամբ նախատեսված օրը գնում է սկեսրոջն օգնելու: Այդ օրն ուղեկցվում է պարերով և ուրախությամբ: Հարսը և իր մի քանի ընկերները բրինձ տնկելու ժամանակ մի սպիտակ տնկիով (Գիլաներեն tūm-e sefīd) հարվածում են փեսայի, փեսայի մոր և հոր աջ ոտքին և ստանում նվերներ փողի կամ կտորեղենի տեսքով: Միաժամանակ փեսայի մայրն ընթրիքի ժամանակ հարսին և մյուս օգնականներին նվերներ է տալիս (Šahābkūmleī 1382/2003: 50): Իրանի հյուսիսում շատ տարածված է բրինձը որպես ողորմություն բաժանելը, քանի որ այն համարվում է չարը քշելու միջոց: Ինչպես որ հավատալիքներում ծառերի ճյուղերը կոտրելը և դրանց վնաս հասցնելը համարվում է վատ, նույնիսկ հանցավոր արարք, այդպես էլ գետնին ընկած բրնձի հատիկներ տրորելը համարվում է անընդունելի և տգեղ արարք: Եթե բրնձի հատիկներն ընկնեն գետնին, պետք է դրանք զգուշորեն վերցնել և նետել հոսող ջրի մեջ կամ թողնել այգում մինչև թռչունները ուտեն (Massė 1938: 388):

Իրանում, հատկապես ցորենի մշակության կարևոր կենտրոններ հանդիսացող շրջաններում, պակաս կարևոր չեն վերջինիս հետ կապված

ծիսական գործողությունները: Ցորենը որպես լիություն պարգևող և սուրբ բույս կիրառվում է բազմաթիվ տոներում:

2.2 Բույսերի ծիսական գործառույթներն ու նշանակությունը իրանական տոներում

Իրանցիների գրեթե բոլոր տոներում այս կամ այն կերպ բույսերը ներկայացված են: Որոշ դեպքերում դրանցից պատրաստվում են միայն այդ տոնի համար նախատեսված կերակուրներ, որոշ դեպքերում՝ իրականացվում են բույսերի հետ կապված ծիսական արարողություններ, որոշ դեպքերում՝ վերարտադրվում է այն, ինչն արդեն կայունացել է հարյուրամյակների ընթացքում որպես պաշտամունքի ու կրոնական հավատալիքների բաղադրիչ:

Նովրուզը ամենակարևոր ու մասսայական տոներից է, որի ժամանակ օգտագործվում են այն բոլոր ծիսական բույսերը, որոնք հին իրանցիների առօրյա կյանքում կամ սննդի մեջ մեծ կարևորության են ունեցել: Այս բույսերը ծլեցվում են հատուկ ամանների մեջ, որպեսզի նոր տարվա սեղանին առատություն հաղորդեն: Ամենակարևոր բույսերը, որոնք մշտապես առկա են այս ծեսերի ժամանակ, և որոնցով գուշակություններ են անում՝ ցորենը, գարին, կորեկը, եգիպտացորենը, սիսեռը, ոսպը, բրինձը, քունջութը և լոբին են: Այսօր էլ այս բույսերը համարվում են իրանցիների սննդի կարևորագույն ու անբաժան մասը:

2.3 Ուտեստի ծիսապաշտամունքային առումները

Ամենակարևոր դերը, ծիսապաշտամունքային տեսանկյունից, կատարում են այն բույսերը, մասնավորապես հացահատիկները, լոբազգիները և մրգերը, որոնք բացի զուտ կերակրային արժեք ներկայացնելուց, օժտված են նաև պատմության մեջ հիշատակված մշակութային ու խորհրդանշական արժեքներով: Արմավենին այն բույսերից է, որ մարդը մշտապես, իր ողջ պատմության ընթացքում, օգտագործել է գործիքներ ու զանազան իրեր, ինչպես նաև տարբեր կերակուրներ պատրաստելու համար: Սա մեկն է այն պատճառներից, որի համար արմավենին, ինչպես ցորենը, թուզը կամ նուռը, մտել է տարածաշրջանի ժողովուրդների ծիսական համալիրի մեջ: Բայց ամենահայտնի և հին ծիսական ուտելիքը սամանուն է (samanū/ samanak): Սամանուն ճաշ է կամ քաղցրավենիքի տեսակ, որ նովրուզից առաջ հատուկ արարողությամբ պատրաստվում է կանանց կողմից: Դրա պատրաստման համար բացի ջրից, ցորենից ու ցորենից ստացվող մթերքներից ուրիշ բան չի օգտագործվում: Այս ուտեստը հեղինակները համարում են Իրանական սարահարթի ժողովուրդների կողմից ստեղծված: Սամանուին քաղցր համ տվողը շիրան է, որ ստացվում է ցորենի բողբոջները մանրացնելուց: Այդ շիրան եռացնում են թեփով ալյուրի հետ: Սամանուն պատրաստում են մեծ պղնձյա թասերի մեջ: Ըստ ավանդույթի՝ կանայք սկսում են սամանուի պատրաստումը

գիշերը և ավարտում են հաջորդ օրվա առավոտյան: Շալեզարդը (šalezard) մեկ այլ իրանական ծիսական ուտելիք է, որի համար օգտագործվում է նուշ և դրա բարակ կտորները: Սպանդը Նասր էդ-դին շահի սեղանի մշտական ուտելիքներից էր, որ ամեն տարի Մեհր ամսին՝ ամառանոցների սեզոնից հետո աճում էր Դամավենդ լեռան լանջերին (Mostoūfī 1386/2007: 422): Նախկինում շահի սեղանի համար նախատեսված տարբեր ուտեստները պատրաստվում էին վեզիրների ու կառավարիչների ներկայությամբ, ովքեր և մաքրում էին մթերքներն ու կանաչիները (Joūdat 1356/1977: 60): Սպանդի կարևորագույն գործառույթը սուրբ Խիզրի սեղանին հայտնվելն էր:

Այսպիսով, ուտեստի, հատկապես ծիսական ուտեստների դիտարկումը կարծես ամբողջացնում է այն շարքը, որ դիտարկեցինք վերը: Բույսերի առասպելականացումը, այնուհետ՝ ծիսականացումն ու բերքատվության, հաջողության, պտղաբերության ապահովման նպատակով տարբեր ծիսական գործողությունների կատարումը սահուն անցնում են “ուտեստի” համակարգ, դրսևորվելով տարբեր տոների ու ծիսական արարողությունների ընթացքում:

2.4 Բույսերի պաշտամունքի դրսևորումները ամուսնահարսանեկան ծիսաշարում

Ամուսնահարսանեկան արարողությունները, սգո և հիշատակի արարողությունների հետ, թերևս ամենախիտ ու բազմազան սիմվոլիկան ունեն, քանի որ ուղղակիորեն կապվում են ամուսնական զույգի միջոցով կյանքի շարունակականության, սերնդաճի, ներդաշնակության ու այլ հիմնարար գաղափարների հետ: Հետաքրքիր արարողություններից մեկը, որում դրսևորվում է բույսերի սիմվոլիզմը, տեղի է ունենում Առանի, Ռավանդի, Նարաղի, Նեյդաշի և Նուշաբադի շրջաններում Բահմանի 25-ի գիշերը և կոչվում է esfandrʻayatī: Այս արարողության ընթացքում բոլոր նշանված երիտասարդները իրենց նշանածների համար 11 պղնձյա սկուտեղների մեջ սպանդ են ուղարկում: Յուրաքանչյուր սկուտեղի մեջ դնում են նվեր, օրինակ հագուստ, զարդ, բրինձ, յուղ, չամիչ և շատ այլ իրեր: Յոթերորդ սկուտեղի մեջ դնում էին հինա, օճառ, մայրի և կոշիկ: Նման կերպ 11 պղինձներից յուրաքանչյուրը դնում էին 11 մարդկանց գլխին և շարժվում հարսի տուն (Anjavīšīrāzī 1379/2000: 99):

Նշանադրության և հարսանեկան ծեսերի ժամանակ օգտագործվող բույսերից մեկը ծոթորն է: Յազդ նահանգի Արդաքան քաղաքի բնակիչները հավատում են ծոթորի պտղաբեր ու բարերար ուժին:

Իրանցիների կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ամուսնահարսանեկան արարողություններում մինչ օրս կարևոր դեր է խաղում հինան: Ամուսնության ու նշանադրության ժամանակ հինա դնելու արարողությունը դեռևս հնուց տարածված է եղել Իրանի շատ գյուղերում ու

քաղաքներում: Նշանադրության ու հարսանիքից մի գիշեր առաջ փեսայի ընտանիքը հարսի տուն է տանում մեծ կամ փոքր սկուտեղներ, որոնց վրա դրված է հինա՝ տարբեր ձևով զարդարված, և դրանց մեջտեղում մոմեր: Երկու կողմերից էլ բազմաթիվ հյուրեր են հրավիրվում և սկսում պարել ու ուրախանալ:

Բասման գունավորող հատկություն ունեղոց տերևներով ու ծաղիկներով բույս է, որի երևները չորացնում են, մանրացնում ու դարձնում փոշի: Դրա խիտ ու թանձր լուծույթն օգտագործում են կանանց հոնքերը և տղամարդկանց մորուքը ներկելու համար: Սարվեսթանում այդ խառնուրդը խտացնելու համար դրան սերկևիլի սերմեր են ավելացնում (Homāyūnī 1348/1969: 454): Հոնքերը բասմայով ներկելը և դրանք աղեղնաձև կամ կիսալուսնաձև դարձնելը մշտապես գովերգվել է պարսկալեզու բանաստեղծների կողմից:

2.5 Բույսերի պաշտամունքի դրսևորումները սգո և հիշատակի արարողություններում:

Իրանական մշակույթում, ինչպես բազմաթիվ այլ մշակույթներում, բույսերի ներկայությունն ու սիմվոլիզմը իր գագաթնակետին է հասնում սգո և հիշատակի արարողություններում: Դրանց միջոցով հանգուցյալը պատրաստվում է յուրօրինակ ճամփորդության և ժողովրդական պատկերացումների համաձայն, հանգուցյալի հարազատները, ընտանիքի անդամները պարտավոր են ամեն ինչ անել այդ ճամփորդությունը հավուր պատշաճի կազմակերպելու համի:

Այդ պատճառով սգո և հիշատակի արարողություններու հանդիպում են բազմաթիվ բույսեր՝ տարբեր գործառույթներով: Կամֆորայի (պարս. kāfūr, լատ. Laurus camphora), յուրահատուկ հոտը, որը ոմանք համարում են բարի նախանշան, ոմանք էլ առեղծվածային, այս բույսը դարձնում է Իրանում ծիսական բույսերից ամենակարևորներից մեկը: Դրա սպիտակ գույնը, որ մաքրության խորհրդանիշ է, և անուշահոտ լինելը իրանցիների հավատալիքներում ու պատկերացումներում հատուկ տեղ ունի:

Արդեն նշվել է, որ նոճու բուժիչ, բարերար, ծիսական ու սուրբ հատկանիշները պատճառ են դարձել, որպեսզի այս բույսը լայն կերպով օգտագործվի թաղման և հանգուցյալի մարմնի մշակման արարողություններում: Հին Իրանում հանգուցյալների լվացման ու թաղման արարողություններում լայնորեն օգտագործում էին սխտորն ու սպանդը: Հանգուցյալի մարմինը սպիտակ ու մաքուր պատանքի մեջ փաթաթելուց հետո նրա բերանի, քթի ու ականջների մեջ դնում են սպանդի ու սխտորի խառնուրդ գարշահոտությունից հեռու մնալու համար: Թաղման օրը ևս սխտորով ու սպանդով արարողություններ են կատարում: Մեկ այլ բույս, որ Իրանում կիրառվում է թաղման արարողությունների ժամանակ, հինան է, չնայած որ

դրա ամենալայն ու հիմնական կիրառությունները տեսանք հարսանեկան ու նշանադրության արարողությունների ժամանակ:

ԳԼՈՒԽ 3
ԲՈՒՅՍԵՐԻ ՉԱՐԽԱՓԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Իրանական միջավայրում պաշտպանիչ գործառույթներ ունեցող նման բույսերը բավականին շատ են: Լայն տարածում են ունեցել հատկապես սպանդի և աղավնիճի հետ կապված պատկերացումները (Lat. Verbena, պարս. šāh pasand): Բացի բուժական նպատակներից, այս բույսերն օգտագործում են նաև որպես թալիսման՝ չար աչքի դեմ, ինչպես նաև նախկին կախարդանքները չեղարկելու համար:

Սովորաբար նույնիսկ գրավիչ ու գեղեցիկ բույսերի և ծաղիկների դեպքում առկա են հավատալիքներ դրանց ահրիմանական ուժի կամ մահաբեր հատկությունների մասին (Friend 1884: 529-530): Այս հավատալիքներից ու առասպելներից շատերը չափազանց հին են և չեն տրվում մեկնության:

Հաֆթսինի սեղանին սպանդի և սխտորի առկայությունը, դրանց կիրառումը թաղման արարողության ժամանակ, բախտը բացելու ծեսի ժամանակ և ամենակարևորը, այս բույսի կիրառությունը չար աչքից ազատվելու ու կախարդանքը վերացնելու գործում այս բույսերի, հատկապես դրանց սուր հոտի հանդեպ իրանցիների ակնածանքի ապացույցն է:

Սոխը նույնպես, ինչպես սպանդը, ժողովրդական հավատալիքներում օժտված է մոգական ու գերբնական հատկություններով: Ալ դևին և փերիներին քշող այս բույսը օգտագործվում է հղի կանանց և կույս աղջիկներին չար ուժերից պաշտպանելու համար: Սատանայից պաշտպանելու համար ոչ միայն Իրանում, այլև տարածաշրջանի այլ երկրներում այն կախում են տան դռնից կամ դնում նորածնի բարուրի տակ (Simoons 1998: 45, 48): Պետք է նշել սակայն, որ Իրանում, ի հակադրություն այլ մշակույթների, ինչպես հնդկականը, երբեք սոխը պիղծ, անմաքուր չի համարվել և ծեսերում մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել: Այդ ծեսերից ամենակարևորը Նովրուզին հաֆթսինի սեղանն է, որի կարևոր բաղադրիչը սոխն է:

Աստիճանաբար լավ և վատ հոտերի հանդեպ կարծիքներն այնքան են ամրապնդվել, որ իրանցիները սկսում են խուսափել այն ծիսական ուտելիքներից, որոնք տհաճ հոտ ունեն:

Նռենին և դրա պտուղները, օժտված լինելով առեղծվածային ու գերբնական հատկանիշներով, կիրառվում է ոչ միայն ծեսերում ու արարողություններում, այլև չար ուժերից ու կենդանիներից պաշտպանվելու համար: Հին իրանցիները տունը դևերից մաքրելու և բնակատեղին մաքուր պահելու համար նռան ճյուղեր են այրել և ծուխը տարածել ամբողջ տնով մեկ:

Իրանական մշակույթում միայն բույսերի չարխափան հատկանիշները չէ, որ արտահայտված են: Մարդու բույսերի օգնությանը դիմել է նաև վերջիններիս պաշտպանությունը ստանալու, սիրած էակին հասնելու, փոխադարձ սեր ունենալու և բազմաթիվ այլ նպատակներով:

Նման հատկանիշներ, համաձայն մեր ձեռքի տակ եղած նյութերի, ունի արդեն բազմիցս հիշատակված մանդրագորան: Այսպես օրինակ, երբ ամուսինը ուտում է մանդրագորայով խառնված ուտելիքը, նրան թույլ չեն տալիս թթու ուտել, այլապես կխելագարվի:

Խնձորի հետ կապված ամենակարևոր երևույթներից մեկը հարսանիքի ժամանակ հարսին խնձորով հարվածելն է: Փեսան հարսի կողմը խնձորներ է նետում կամ տալիս է նրա ձեռքը: Այն սովորաբար կարմիր է լինում, ինչն էլ մաքուր սիրո խորհրդանիշ է: Խնձորը նետելուն հաջորդում են երգն ու պարը: Երբեմն խնձորի փոխարեն նուռ, նարինջ, որևէ այլ միրգ կամ ծաղկեփունջ են օգտագործում: Երեխայի ծնվելուց հետո երեխային ու ծննդկանին ահրիմանական ուժերից պաշտպանելը մեր նախնիների անհանգստություններից մեկն էր, որի համար տարբեր բույսեր էին օգտագործվում: Դրանցից մեկը բամբակն էր: Իրանի տարբեր շրջաններում ծննդկանի շուրջը ածուխով գիծ էին քաշում, պարան կապում և մի քանի սևացրած բամբակներ կախում նրա գլխավերևում, որպեսզի ալը չտանի: Եթե ալի երեխան՝ նրա զույգը գար, ծննդկանին մոխրաջուր կտային և կոկորդին բամբակ կդնեին:

Հավատալիքներում, հատկապես ծննդաբերության հետ կապված, բրինձը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Նախ այն, որ բրնձով պատրաստված որոշ հայտնի ուտելիքներ, ինչպես դոլման, կամ բրնձի քուֆթան, համարվում են հղի կնոջ քմահաճույքներ: Բացի այդ, ծննդաբերությունից առաջ, հետո կամ ընթացքում կամ նորածնի հետ կապված բրնձով որոշ ծեսեր են կատարվում: Օրինակ, ծննդաբերությունը թեթևացնելու համար ծննդկանի գլխաշորը նպարավաճառի մոտ գրավ են թողնում և դրա դիմաց բրինձ, ցորեն կամ արմավ են վերցնում: Ծննդաբերությունից հետո արմավը որպես բարեգործություն բաժանում են, իսկ ցորենն ու բրինձը տալիս են աղքատներին (Šokurzāde 1346/1967: 309): Երեխայի ծնվելուց հետո նրան ալից պաշտպանելու համար վեցերոդ գիշերվա արարողություններն են իրականացվում: Մի ամանի մեջ բրինձ, ոսպ և կորեկ են պատրաստում և լցնում ծննդկանի ներքնակի չորս ծայրերին ու սենյակի չորս անկյուններում: Երեխայի օրորոցը կախում են թոնրի վրա, մի քիչ բրինձ են լցնում մեջը, կամ նորածնի քնելու տեղը հարմարեցնում են բրնձով զամբյուղի կամ սկուտեղի վրա:

Իրանական հավատալիքներում մրտենին օժտված է բախտ բացելու և չար աչքից պաշտպանելու հատկությամբ: Քազրունում որևէ ջրհորի մոտ գնալը և դրա մեջ մրտենու տերևներ նետելը ցանկությունների իրականացման գրավական է: Բախտը բացելու համար աղջիկները պետք է չորեքշաբթի գիշերը մի քիչ քաղցրավենիք, մրտենու տերևներ, հինա և մի քանի մետաղադրամներ տանեն ջրհորի մոտ: Արմավի վերաբերյալ ասում են, որ եթե կինն ու տղամարդը կնոջ դաշտանի առաջին օրվանից օրական մի քանի արմավ անշտապ ուտեն, կամ էլ ճաշից ու ընթրիքից հետո երկուական արմավ ուտեն, երեխան տղա կլինի: Իսկ ատամի ցավն անցկացնելու համար 6 փոքրիկ մեխերով այն արմավենու ճյուղի ծայրի չափ ամրացնում են, որ ատամի ցավն անցնի:

Իրանի տարբեր շրջաններում հավատում են, որ որոշակի ծառերի վրա չար հոգիներ են պտտվում, և եթե մարդը այդ ծառի տակ քնի, ջինը նրան կվնասի: Մի քանի վայրերում սա վերաբերվում է բոլոր ծառերին, ուստ մայրերը չեն թողնում իրենց երեխաներին ծառերի տակ քնել (Masse 1938: 343): Գիլանում հավատում են, որ թզի կամ ընկույզի ծառի տակ քնողը ջինն է դառնում: Հնում հողագործները յուրահատուկ վերաբերմունք ունեին ընդեղենի, հատկապես նուշի հանդեպ: Եթե նուշը կոտրեն և զգուշորեն հանեն կեղևից, ասեղի ծայրով դրա վրա ցանկացած նախշեր անեն կամ գրեն և նորից ետ դնեն կեղևի մեջ, խոզի կղանքն ու հողն իրար խառնեն, լցնեն փոսի մեջ և այդ նուշն էլ հետը տնկեն, որպեսզի բերքատու ծառ դառնա, ապա դրա տված յուրաքանչյուր նուշի վրա նախշեր կլինեն:

Այսպիսով, վերը բերված տարբեր օրինակների դիտարկումը հնարավորություն է տալիս արձանագրել, որ իրանական մշակույթում ինչպես ավանդաբար, այնպես էլ մեր օրերում դեռևս պահպանվում է բույսերի չարխափան ու պաշտպանիչ նշանակությունը: Կյանքի տարբեր իրավիճակներում մարդիկ դիմում են բույսերի օգնությանը, մի դեպքում ակնկալելով, որ դրանց օգնությամբ ու միջնորդությամբ կկարողանան ազատվել չար ուժերի ազդեցությունից, մեկ այլ դեպքում հայցում են բարեհաճություն իրենց ու իրենց հարազատների համար, երրորդ դեպքում փորձում են չար ուժերի ազդեցությունից պաշտպանել նորածիններին և այսպես շարունակ: Տարբեր իրավիճակներում բույսերի կարևորության ընդգծումը, միաժամանակ, թույլ է տալիս խոսել երևույթի խորքային ու բազմաշերտ լինելու մասին, քանի որ բույսերին պաշտպանիչ ու չարխափան հատկանիշներ վերագրելը սոսկ այս կամ այն պատմական շրջանին բնորոշ իրողություն չէ: Բույսերին մարդիկ դիմել են դեռևս պատմության հնագույն շրջանում, այնուհետ ավանդույթները պահպանվել են, հարստացել ու հասել մինչև մեր օրերը, այսպիսով ապացուցելով նաև իրենց կենսունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու և բնության, շրջակա աշխարհի միջև կապերի համակարգը վերջին մի քանի տասնամյակում ազգաբանական, մարդաբանական տարբեր գիտակարգերի հետաքրքրության կենտրոնում է:

Իրանական ժողովուրդների մշակույթում այդ կապերի վրա ազդող կարևորագույն իրողություններից մեկի՝ բույսերի պաշտամունքի տարբեր առումների ու դրսևորումների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հերթական անգամ բացահայտել, որ կարևորությունը, որ տրվում է այդ առումներին, ամենևին պատահական չէ:

Բույսերի պաշտամունքը, բույսերի հանդեպ վերաբերմունքը, չափազանց բարդ համակարգ լինելով, միաժամանակ ժողովրդի տնտեսական զբաղմունքների, դրանց շուրջ ձևավորված բազմաբնույթ հարաբերությունների, տոնածիսական կյանքի ու առօրյա կենցաղի յուրօրինակ խտացում է թեկուզ այն պատճառով, որ մի դեպքում բույսերն ուղղակի հանդես են գալիս որպես տարբեր համակարգերի “կազմակերպիչ”, իսկ այլ դեպքերում արդեն նպաստում են հարաբերությունների կազմակերպմանն ու կարգավորմանը:

Ատենախոսության առաջին գլխում կատարված վերլուծությունները, օրինակ, հնարավորություն տվեցին բացահայտել, որ առասպելներում բույսերի ներկայությունը, ունենալով մի կողմից հնդեվրոպական, մյուս կողմից՝ առաջավորասիական հիմքեր, յուրօրինակ խտացումն է իրանական տարբեր ժողովուրդների մշակույթների զարգացման ընդհանրապես: Մյուս կողմից, ազգագրական նյութերի մանրամասն դիտարկումը թույլ տվեց արձանագրել, որ Իրանական բարձրավանդակում հայտնի բույսերի մի հիմնական մասը այս կամ այն կերպ առկա է առասպելներում, էպոսում, հավատալքիներում:

Ազգագրական նյութերի համեմատությունը աղբյուրների տարբեր խմբերի հետ թույլ տվեց արձանագրել նաև, որ բույսերի պաշտամունքն ու վերջինիս տարբեր դրսևորումները միայն առասպելներում ու բանահյուսական տարբեր սյուժեներում չէ, որ առկա են:

Երկրագործական տարեշրջանի կազմակերպումն օրինակ, որը ուղղակիորեն նպատակ ունի ապահովել բույսերի աճը, բարձր բերքը, կառուցվում է նույն բույսերի և դրանց հետ կապված ծիսական գործողությունների շուրջ:

Բույսերը շատ ակտիվ ներկայացված են իրանական տարբեր տոներում, ընդ որում, դրանցից շատերում դրանք ունեն համակարգաստեղծ բնույթ:

Ուտեստի, հատկապես տոնածիսական ուտեստի ուսումնասիրությունը ազգագրագետներին հնարավորություն է տվել բացահայտել որ այս համակարգը հագեցած է բազմաթիվ սիմվոլներով, ինչը մենք հստակ տեսնում

ենք նաև իրանական նյութերում: Ուտեստային նախընտրություններն ու սահմանափակումները, դրանց “ծառայեցումը” կոնկրետ խնդիրների լուծմանը, կենսափուլերում, անցման տարբեր արարողություններում ուտեստի համակարգաստեղծ բնույթը թույլ են տալիս պնդել, որ այն, լինելով որոշակիորեն ավտոնոմ, ինքնուրույն երևույթ, միաժամանակ կրում է իրանական մշակույթում բույսերի պաշտամունքի համակարգային ազդեցությունն ու փոխլրացնում վերջինիս տարբեր դրսևորումները:

Եվ վերջապես, իրանական տարբեր ժողովուրդների վերաբերյալ ազգագրական նյութերի համադրումը հնարավորություն տվեց ապացուցել, որ ամուսնահարսանեկան հիմնական արարողություններն ու սգո և հիշատակի տարբեր ծեսերը չեն կարող “գոյատևել” առանց բուսական հիմքի. մի դեպքում կոնկրետ բույսը կարող է ծառայել ամուսնական զույգի բարեկեցության, հաջողության ապահովմանը, մեկ այլ դեպքում՝ հանդես գալ որպես հանգուցյալին այն աշխարհ ճանապարհելու կարևոր տարր:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ բույսերի պաշտամունքը առկա է իրանական տարբեր ժողովուրդների մշակույթի տարբեր համալիրներում:

Առասպելներում, բանահյուսական տարբեր սյուժեներում ծառերի, հատիկավոր բույսերի ու այլ բույսերի առկայությունը ցույց է տալիս, որ գործ ունենք պաշտամունքի վաղ ու բազմաբնույթ հիմքերի հետ:

Տոնածիսական կյանքում, առօրյա կենցաղում պաշտամունքի դրսևորումների բազմազանությունը թույլ է տալիս արձանագրել արդեն պաշտամունքի “ժողովրդական բնույթը”: Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ հենց ժողովրդական միջավայրում է, որ տեղի է ունենում պաշտամունքի կոնկրետ եղանակների, ծիսական արարողությունների բյուրեղացումը, մաքրագործումն ու իրական ներգրավումը հասարակական կյանք ու առօրյա կենցաղ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

نیلوفر: کهن اسطوره ای هندوایرانی – عصر انسانشناسی، 1394، شماره ی 2، ص ص. 11-17.

1. «Նունուֆար ծաղիկը. Հնդիրանական մի առասպելի շուրջ», *Մարդաբանության Դար*, 2016, h. 2, էջ 11-17:
2. “Mandrake: A Plant Totem”, Orientalia, h. XV, 2013, Երևան, էջ 9-13:
3. “Apotropaic Plants in the Persian Folk Culture”, *Iran and the Caucasus*, vol. 16.2, 2012, Brill: 189-200.

4. “New Rituals Ensuing from the Tea”, Orientalia, h. XIII, 2011, Երևան, էջ 79-88:

Գրքեր

از جام پیاله تا استکان نعلبکی (چای نوشینی به مثابه ی فرهنگ)، 1392، تهران، 123 ص.

1. *Թեյախմության ծեսը որպես մշակութաբանական երևույթ*, Թեհրան, 2014, 123 էջ:

مردم گیاه: گیاهان آیینی در فرهنگ و فولکلور ایران، 1392، تهران، 260 ص.

2. *Ծիսական բույսերը Իրանի մշակույթի և բանահյուսության մեջ*, Թեհրան, 2014, 260 էջ:

ПЕЙМАН МАТИН

РАСТЕНИЯ В ВЕРОВАНИЯХ НАРОДОВ ИРАНА

Иранскую культуру, при этнологическом подходе, можно рассматривать в двух основных аспектах. С одной стороны, культура эта является частью общеиндоевропейской культуры, как ее очень важная составляющая. С другой стороны, иранская культура является такой системой, которая в течении долгого периода времени имела интенсивные контакты с местными, локальными культурами, влияла на них и носила влияние местных культур.

В этнографических исследованиях давно проанализирована та очень важная роль, которую сыграли и играют природа, растительный мир, отдельные виды растений в культуре в целом, и в празднично-ритуальной жизни и культе в частности. Иранский культурный мир не является исключением.

Но, несмотря на важность вышеуказанного аспекта, он до сих пор не стал обьектом отдельного исследования. Следовательно, в диссертации впервые всесторонне, с точки зрения этнографической науки проанализированы такие важные составляющие иранской культуры, как проблемы культа растений, а также его проявлений в разных системах и подсистемах культуры.

Основная цель диссертационной работы - на основе анализа собранного нами этнографического материала, а также литературы на персидском и других языках показать, какую роль играли и играют растения; какие функции имели разные виды растений в целом, а также в иранской мифологии, мифологическом мышлении народов Ирана, в верованиях народов Ирана.

Особое внимание в ходе анализа уделено также конкретным проблемам: какую роль играли растения в конкретных ритуалах, какие табу они формировали в жизненно важных системах и субсистемах - пища, ритуалы, связанные с умершими и так далее.

В диссертационной работе, с учетом факта полиэтничности Ирана, материал, связанный с национальными меньшинствами в основном не рассматривается. Это усложнило бы нашу работу.

В работе поставлены три основные задачи. Отправной точкой является научная гипотеза, согласно которой - растения важные составляющие иранской культуры и имеют важное влияние в материальную и духовную культуры народов Ирана.

Впервые в диссертационной работе на основе методов, принятых в этнографической науке культ растений представлен как взаимозависимая и взаимообусловленная система.

Этнографический материал был собран в течении 2009-2013гг.

Методологически диссертация совмещает разные методологии и методы, являяясь своего рода синтезом методов исторической и этнографичской наук, с доминированием методов этнографических: полевое исследование, индивидуальные и глубинные интервью, метод включенного наблюдения.

Полевой материал собран в 75 населенных пунктах Ирана, интервью проводились в основном с представителями старшего поколения. (ок. 60 интервью).

В ходе изложения диссертационной работы была использована богатая литература как на английском и других европейских языках, так и на персидском. Использованы как чисто теоретические исследования, так и монографии и статьи, содержащие конкретный этнографический материал.

Многие, касающиеся культа растений проблемы рассматривались также в исследования персидских ученых, но так-как они в основном на персидском, не имеют широкого оборота. С этой точки зрения можно констатировать, что диссертационная работа также популяризация исследований персидксих авторов. В их числе надо упомянуть в первую очередь исследование Садека Хедаята "Нейрангестан"- многокомпонентное исследование с очень богатым и важным этнографическим материалом.

Диссертационная работа может стать основой, базой для дальнейших исследований проблем культа растений у разных иранских народов и народов Ирана. Как уже отмечалось, проблема эта до сих пор нуждается в системном исследовании.

Диссертация состоит из введения, трех глав с параграфами, заключений, списка использованных источником и литературы и приложения.

Plants in the belifs of Iranian peoples

Peyman Matin

From anthropological perspective Iranian culture is part of Indo-European cultural world from one side, and from the other side it is a system of regional interconnections and interrelations between other peoples (not only of Iranian origin) in different historical dimensions.

The ethnographic studies have widely discussed the important role of nature, plants in culture and especially in rituals, beliefs and festival events. The Iranian culture is not exception. Despite there is still gap of research on the issue. Thus, the research paper is one of the initial attempts to research the issues around the perceptions, beliefs and practices around plants.

The aim of the dissertation paper is to reveal the role of the plants in general and the role of particular plants in Iranian mythology, beliefs of Iranian peoples, the use of them in special rituals and events, the regulations and limitations due to all these perceptions over the plants such as food, especially festival and ritual food based on different sources: publications, ethnographic materials and historical sources.

The research paper has not yet touched the practices of religious minorities in Iran such as Armenians, Assyrians, and Jews due to multi ethnic portrait of Iran.

The dissertation aimed at multilevel objectives. As a start point the key role of plants in culture and practices of Iranian peoples is defined.

The dissertation is one of the first ethnographic attempts to show the cult of plants in culture of the Iranian peoples as complicated and complex system.

The research includes the time period from 1387/2009 to 1392/2013. Methodologically, it is a combination of methods used in historiography and ethnography, but the main is ethnographic methodology, particularly field ethnographic research, in depth interviews, and observations. Field research took place in 75 rural settlements and cities and interviews were conducted mainly with elderly people (60 interviews).

Extensive literature review of both English and Persian publications on theoretic and ethnographic case researches is led in the core of the dissertation paper.

Vast of Iranian researchers touched the issues of cult of plants, but their publications are not widely circulated due to publication in Persian. The most well-known research is ''Neyrangestan'' of Sadeq Hedayat which is multilayered research full of rich ethnographic materials.

Dissertation can serve as a basis for the studies of ethnography of the peoples of Iran, in particular, about the cult of plants and practices around it.

The dissertation is consisting of introduction, 3 chapter with relevant subchapters, conclusions and bibliography with appendix.